ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, ք.Եղեգիս, (0281) 99282, shatin.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08-Ը ՆՈՅԵՄԲԵՐԻ 2021 թվականի N 256 Ա

ՀՈՒՆԱՆ ՀՄԱՅԱԿԻ ՍՏԵՓԱՆՅԱՆԻ ՀԵՏ ՈՐՈՇԱԿԻ ԺԱՄԿԵՏՈՎ ԿՆՔՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ԵՎ <<ԵՂԵԳԻՍԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ>> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆՈՒՄ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՆՐԱ ՀԵՏ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 26/03/2020թ. <<Համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների տնօրենի թափուր պաշտոն զբաղեցնելու մրցույթի նախապատրաստման, անցկացման և արդյունքների ամփոփման կարգը հաստատելու մասին>> թիվ 02-Ն հրամանի 72-րդ մասով, ''Տեղական ինքնակառավարման մասին'' Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ, 24-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, 2-րդ մասով և հիմք ընդունելով <<Եղեգիսի համայնքային տնտեսություն>> ՀՈԱԿ-ի տնօրենի թափուր պաշտոն զբաղեցնելու համար մրցույթ անցկացնող հանձնաժողովի մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված մասնակցի վերաբերյալ որոշումն ու Հ. Ստեփանյանի դիմումը

որոշում եմ՝

1.Լուծել Հունան Հմայակի Ստեփանյանի հետ 05/05/2021թ. կնքված աշխատանքային պայմանագիրը:

2.Հունան Հմայակի Ստեփանյանին նշանակել <<Եղեգիսի համայնքային տնտեսություն>> ՀՈԱԿ-ի տնօրենի պաշտոնում, և նրա հետ կնքել աշխատանքային պայմանագիր՝ հինգ տարի ժամկետով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԱՐԹՈՒՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ**

2021թ.նոյեմբեր08

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, ք.Եղեգիս, (0281) 99282, shatin.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

09-Ը ՆՈՅԵՄԲԵՐԻ 2021 թվականի N 256 Ա

ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՇԱՏԻՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՓՈՂՈՑ 22, ԹԻՎ 28 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՔԱՂԱՔԱՑԻ ԱՐՄԵՆ ԼԵՆԻԿԻ ԱՌԱՔԵԼՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ԱՌԱՆՁԻՆ՝ ԵՐԿՈՒ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ԲԱԺԱՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 97-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 46-րդ հոդվածի պահանջներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 29-ը դեկտեմբերի 2005 թվականի թիվ 2387-Ն որոշման 33-րդ կետը

որոշում եմ՝

1.Եղեգիս համայնքի Շատին բնակավայրի փողոց 22, թիվ 28 հասցեում գտնվող, քաղաքացի Արմեն Լենիկի Առաքելյանի սեփականություն հանդիսացող բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողատեսքը /կադաստրային ծածկագիր՝ 10-035-0001-0002, մակերեսը՝ 0.57378հա/ բաժանել երկու՝ ստորև ներկայացված տվյալներով միավորների և կատարել պետական գրանցում.

- կադաստրային ծածկագիր՝ 10-035-0001- , մակերեսը՝ 0.00678հա,
- կադաստրային ծածկագիր՝ 10-035-0001- , մակերեսը՝ 0.567հա:

2.Անշարժ գույքի առանձնացվող օբյեկտին տրամադրել Եղեգիս համայնք, Շատին բնակավայր, փողոց 22, թիվ 28/1 հասցեն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԹՈՒՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ

2021 թ. նոյեմբերի 09
ի Եղեգիս

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, ք.Եղեգիս, (0281) 99282, shatin.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10-Ը ՆՈՅԵՄԲԵՐԻ 2021 թվականի N 257 Ա

ՀԱՆԳՈՒՅՑԱԼ ԱՐԵՎՀԱՏ ԼԵՎՈՆԻ ԶԱՔԱՐՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆ ՏՆԱՄԵՐՁ ՀՈՂԱՄԱՍԵՐԻՆ ԵՎ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ, 24-րդ կետերով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 29-ը դեկտեմբերի 2005 թվականի թիվ 2387-Ն որոշումը

որոշում եմ՝

Եղեգիս համայնքի Հորս բնակավայրի վարչական սահմաններում գտնվող, հանգուցյալ Արևհատ Լևոնի Զաքարյանի սեփական՝

1. բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասին և բնակելի տանը /կադաստրային ծածկագիր՝ 10-031-008-012, մակերեսը՝ 0.114 հա/ տրամադրել Եղեգիս համայնք, Հորս բնակավայր, փողոց 8, տուն 3 հասցեն,

2. բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասին /կադաստրային ծածկագիր՝ 10-031-017-006, մակերեսը՝ 0.062 հա/ տրամադրել Եղեգիս համայնք, Հորս բնակավայր, փողոց 4, թիվ 23 հասցեն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԱՐԹՈՒՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ**

2021թ.նոյեմբերի10

հ.Եղեգիս

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, ք.Եղեգիս, (0281) 99282, shatin.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10-Ը ՆՈՅԵՄԲԵՐԻ 2021 թվականի N 259 Ա

09-Ը ՆՈՅԵՄԲԵՐԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 256Ա ԵՎ 10-Ը ՆՈՅԵՄԲԵՐԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 257Ա ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետերի պահանջներով

որոշում եմ՝

1.Եղեգիս համայնքի ղեկավարի 09-ը նոյեմբերի 2021 թվականի <<Եղեգիս համայնքի Շատին բնակավայրի փողոց 22, թիվ 28 հասցեում գտնվող քաղաքացի Արմեն Լենիկի Առաքելյանի սեփականություն հանդիսացող հողամասը առանձին՝ երկու միավորների բաժանելու և հասցե տրամադրելու մասին>> թիվ 256Ա որոշման հերթական /գրանցման/ համարում ''256'' թիվը փոխարինել ''257'' թվով:

2.Եղեգիս համայնքի ղեկավարի 10-ը նոյեմբերի 2021 թվականի <<Հանգուցյալ Արևհատ Լևոնի Զաքարյանի սեփական տնամերձ հողամասերին և բնակելի տանը հասցե տրամադրելու մասին>> թիվ 257Ա որոշման հերթական /գրանցման/ համարում ''257'' թիվը փոխարինել ''258'' թվով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԱՐԹՈՒՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ**

2021թ.նոյեմբերի10

ք.Եղեգիս

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, ք.Եղեգիս, (0281) 99282, shatin.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10-Ը ՆՈՅԵՄԲԵՐԻ 2021 թվականի N 260 Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐՏԱԲՈՒՅՆՔ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԲՆԱԿԻՉ ՄԱՄԱՇ ԿԻՐԱԿՈՍԻ ՄԱՐԳԱՐՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԻՆՔՆԱԿԱՄ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ՔԱՆԴԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍՆ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1.Վարչական ակտով լուծվող հարցի նկարագրությունը.

Վայոց ձորի մարզի Եղեգիս համայնքի Արտաբույնք բնակավայրի բնակչուհի Մամաշ Կիրակոսի Մարգարյանը 2021թ. մայիս ամսվա սկզբներից Արտաբույնք բնակավայրում սեփականության իրավունքով իրեն պատկանող հողատարածքից դուրս, /հողամասի կադաստրային ծածկագիրը՝ 10-010-0042-0002 / սեփական բնակելի տան պատի երկայնքով մոտ 16 մետր երկարությամբ, համայնքային սեփականություն հանդիսացող ընդհանուր օգտագործման հողատարածքի / ներբնակավայրային ավտոճանապարհ/ վրա առանց համապատասխան թույլտվության ինքնակամ իրականացրել է բետոնյա շինարարություն, ինչով խախտվել են Հայաստանի Հանրապետության կառավարության <<Հայաստանի Հանրապետությունում կառուցապատման նպատակով թույլտվությունների և այլ փաստաթղթեր տրամադրման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության Կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին>> 15-ը մարտի 2015 թվականի N 596-Ն որոշման պահանջները:

11.06.2021թ. իրականացվել է վարչական վարույթի մասնակիցների լսում, որի ժամանակ վարչական իրավախախտում կատարած Մ. Մարգարյանը հայտարարել է, որ ինքը գործել է օրենքի սահմաններում, համաձայն չի իր նկատմամբ վարչական տույժ կիրառելուն:

<<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, 42-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի, <<Վարչական իրավախախտումների վերաբերյալ>> Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասի, 219.1 –րդ, 305-րդ հոդվածների պահանջների համաձայն Եղեգիս համայնքի ղեկավարի 15.06.2021թ. թիվ 157Ա որոշմամբ Մ. Մարգարյանը ենթարկվել է վարչական պատասխանատվության՝ նշանակելով տուգանք՝ սահմանված նվազագույն աշխատավարձի չորս հարյուրապատիկի չափով:

2. Վարչական ակտն ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը.

ա/Արտաբույնք բնակավայրում Մամաշ Մարգարյանի կողմից ինքնակամ կառույցի շինարարությունը իրականացվել է առանց համապատասխան քաղաքաշինական փաստաթղթերի, այն հանդիսանում է ինքնակամ կառույց, իսկ դրանում ծանրաբեռնված հողամասը փաստացի օգտագործվում է ապօրինի, քանի որ այդ հողամասի նկատմամբ չկա օրենսդրությամբ սահմանված կարգով ձևավորված որևէ իրավունք:

բ/Համաձայն ՀՀ կառավարության << Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին>> 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշման պահանջների, օրինականացման ենթակա չեն այն ինքնակամ կառույցները, որոնց պահպանումը խախտում է այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ է սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը:

գ/Մ. Մարգարյանի կողմից կառուցած ինքնակամ շինությունը խոչընդոտում է տրանսպորտի անվտանգ երթևեկությանը, դրանով վտանգ է սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը և կարող է առաջացնել անկանխատեսելի հետևանքներ: Մ. Մարգարյանին բազմիցս գրավոր և բանավոր առաջարկվել է վերացնել ինքնակամ կառույցը և հողամասը բերել նախկին տեսքին, որը սակայն չի կատարվել:

3.Վարչական ակտն ընդունելու հիմավորումը.

ա/ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ինքնակամ կառույց է համարվում օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով, այդ նպատակի համար չհատկացված հողամասում կամ առանց թույլտվության կամ թույլտվությամբ սահմանված պայմանների կամ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով կառուցված կամ վերակառուցված շենքը, շինությունը կամ այլ կառույցը:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասում գտվող ինքնակամ կառույցի նկատմամբ ճանաչվում է պետության կամ համայնքի սեփականությունը, անկախ նրանից, թե ով է այն կառուցել:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ հողամասի սեփականատերն իրավունք ունի քանդելու իր հողամասում գտնվող ինքնակամ կառույցը:

Նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ ինքնակամ կառույցը չի կարող ճանաչվել օրինական, եթե կառույցը պահպանելը խախտում է այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ է սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը:

բ/ՀՀ կառավարության << Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին>> 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշման հավելվածի 33 -րդ կետի համաձայն, համայնքի ղեկավարը սեփական նախաձեռնությամբ ընդունում է որոշում պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերում գտնվող ինքնակամ կառույցներն օրինականացնելու կամ քանդելու մասին:

կառուցապատողներին տրված ճարտարապետահատակագծային առաջադրանքների, բնակավայրերի քաղաքաշինական կանոնադրության պահանջների կատարումը, հողերի և ամրակայված գույքի քաղաքաշինական նպատակային օգտագործումը, ինչպես նաև կանխարգելում, կասեցնում է ինքնակամ շինարարության դեպքերը և օրենքով սահմանված կարգով ապահովում է դրանց հետևանքների վերացումը:

Հաշվի առնելով վերը նշված փաստական և իրավական հիմնավորումները, հիմք ընդունելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի դրույթները, ՀՀ կառավարության << Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին>> 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշման պահանջները, << Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> օրենքի 78-րդ, 80-րդ և 86-րդ հոդվածների դրույթերը, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջները, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, 42-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի պահանջներով

որոշում եմ՝

1.Առաջարկել Մամաշ Կիրակոսի Մարգարյանին սույն որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից՝ եռօրյա ժամկետում քանդել իր տանը կից համայնքային սեփականություն հանդիսացող ընդհանուր օգտագործման հողատարածքի / ներբնակավայրային ավտոճանապարհ / վրա առանց համապատասխան թույլտվության իրականացրած ինքնակամ կառույցը:

2.Նախազգուշացնել Մամաշ Կիրակոսի Մարգարյանին սույն որոշման 1-ին կետում նշված ժամկետում նախատեսված պահանջները չկատարելու դեպքում՝ օրենսդրությամբ սահմանված կարգով կկիրառվեն վարչական հարկադրանքի միջոցներ:

3.Հանձնարարել Եղեգիս համայնքի Արտաբույնք բնակավայրի վարչական ղեկավարին, սույն որոշման 1-ին կետով սահմանված ժամկետում Մամաշ Մարգարյանի կողմից նույն կետով նախատեսված պահանջները չկատարելու դեպքում Եղեգիսի համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ Գ. Եղյանի և ոստիկանության հասարակական կարգի պահպանության ծառայության օժանդակությամբ քանդել Արտաբույնք բնակավայրում Մամաշ Մարգարյանի տանը կից կառուցված ինքնակամ կառույցը և ապօրինի տիրապետումից ազատել համայնքի սեփականություն հանդիսացող հողամասը:

4.Առաջարկել ՀՀ ոստիկանության Վայոց ձորի մարզային վարչության Եղեգնաձորի բաժի պետին՝ սույն որոշման 3-րդ կետի համաձայն, Եղեգիսի համայնքապետարանի կողմից վարչական հարկադրանքի միջոցներ կիրառելու ընթացքում վերը նշված վայրում ապահովել հասարակական կարգի պահպանումը:

5.Մամաշ Մարգարյանի կողմից ինքնակամ կառույցը կամովին չքանդելու դեպքում, քանդումն իրականացնել համայնքի միջոցներով և ծախսերով:

6.Սույն որոշման պահանջների կատարման կազմակերպումն ու

ղեկավարի, համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետներ Գ. Եղյանի և Ա. Արտաշյանի վրա:

7.Սույն որոշման կատարման հսկողությունը հանձնարարել Եղեգիսի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին:

8.Որոշումն ուժի մեջ է մտնում պատճենը Մամաշ Մարգարյանին հանձնելու հաջորդ օրվանից և կարող է գանգատարկվել դատական կարգով՝ երկու ամսվա ընթացքում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԱՐԹՈՒՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ**

2021թ.նոյեմբերի10

հ.Եղեգիս

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, ք.Եղեգիս, (0281) 99282, shatin.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12-Ը ՆՈՅԵՄԲԵՐԻ 2021 թվականի N 261 Ա

ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՄՐՑՈՒՅԹ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ, 24-րդ կետերի, 43-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 76-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերի պահանջներով, հիմք ընդունելով Եղեգիս համայնքի ավագանու 14/10/2021թ. թիվ 89Ա որոշումը, ***որոշում եմ՝***

2021 թվականի դեկտեմբերի 16-ին ժամը 10:30-ին Եղեգիսի համայնքապետարանի շենքում կազմակերպել մրցույթ Եղեգիս համայնքի Վարդահովիտ բնակավայրի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողեր նպատակային նշանակության կապ հողատեսքի համար 60 /վաթսուն/ տարի ժամկետով՝ կապի նշանակության օբյեկտների կառուցման ու սպասարկման համար՝

- կադաստրային ծածկագիր՝ 10-041-0202-0183, մակերեսը՝ 0.025 հա,
- մեկնարկային գին սահմանել զուտ եկամտի 110 տոկոսը,
- մրցույթի մասնակցության հայտերի ընդունման վերջնաժամկետը 2021 թվականի դեկտեմբերի 10-ին, ժամը՝ 18:00-ին,
- նախավճարի չափը սահմանել մեկնարկային գնի 5 տոկոսի չափով,
- քայլի չափը հաշվել մեկնարկային գնի 5%-ի չափով,
- հողամասն ապահովված է մոտեցման ճանապարհով, հողամասում ինժեներատրանսպորտային ենթակառուցվածքներ առկա չեն և հողամասի նկատմամբ սահմանափակումներ, սերվիտուտներ չկան,
- մասնակցության համար անհրաժեշտ է ներկայացնել հայտ, անձնագրի պատճեն, մասնակցության վճարի անդորրագիր,
- մասնակցության վճար՝ 10 000 դրամ,
- Կայանալիք մրցույթի մասին հայտարարություն տալ Հայաստանի Հանրապետություն օրաթերթում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԱՐԹՈՒՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության ինտերնետով ծանուցման պաշտոնական կայք

Հայտարարությունների առցանց ընդունում

Ձեր հայտարարությունը ընդունված է:
Ձեր հրապարակային ծանուցման
նույնականացման համարն է **967186**:
Տպեք կամ պահպանեք այն:

անուշ գրքեր
տարբեր հեղինակներ

թիվ 261 Լ և 262Լ
դրոշմաթղթեր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, ք.Եղեգիս, (0281) 99282, shatin.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12-Ը ՆՈՅԵՄԲԵՐԻ 2021 թվականի N 262 Ա

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ԱՃՈՒՐԴ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ, 24-րդ, 43-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 67-70-րդ հոդվածների պահանջներով, հիմք ընդունելով Եղեգիս համայնքի ավագանու 14/10/2021թ. թիվ 93Ա որոշումը

որոշում եմ՝

1.2021 թվականի դեկտեմբերի 16-ին ժամը 12:00-ին Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգիսի համայնքապետարանի շենքում կազմակերպել աճուրդ Եղեգիս համայնքի Գողթանիկ բնակավայրի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողատեսքերի համար՝ գյուղատնտեսական գործունեություն ծավալելու նպատակով /մեկ լոտ/.

- այլ հողատեսք, կադաստրային ծածկագիր՝ 10-018-0148-0032, մակերեսը՝ 0,10335հա,
- այլ հողատեսք, կադաստրային ծածկագիր՝ 10-018-0105-0032, մակերեսը՝ 0,6հա,
- վարելահող, կադաստրային ծածկագիր՝ 10-018-0125-0022, մակերեսը՝ 0,618հա,
- այլ հողատեսք, կադաստրային ծածկագիր՝ 10-018-0148-0031, մակերեսը՝ 0,2126հա,
- արոտավայր հողատեսք, կադաստրային ծածկագիր՝ 10-018-0148-0011, մակերեսը՝ 0,05հա,
- մեկնարկային գին սահմանել կադաստրային արժեքի 150%-ի չափով,
- աճուրդի մասնակցության հայտերի ընդունման վերջնաժամկետը 2021 թվականի դեկտեմբերի 10-ին, ժամը՝ 18:00-ին,
- նախավճարի չափը սահմանել մեկնարկային գնի 5 տոկոսի չափով,
- քայլի չափը հաշվել մեկնարկային գնի 5%-ի չափով,

- հողամասն ապահովված է մոտեցման ճանապարհով, հողամասերում ինժեներատրանսպորտային ենթակառուցվածքներ առկա չեն և հողամասերի նկատմամբ սահմանափակումներ, սերվիտուտներ չկան,
- մասնակցության համար անհրաժեշտ է ներկայացնել հայտ, անձնագրի պատճեն, մասնակցության վճարի անդորրագիր,
- մասնակցության վճար՝ 10 000 դրամ,
- Կայանալիք աճուրդի մասին հայտարարություն տալ Հայաստանի Հանրապետություն օրաթերթում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԹՈՒՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ

2021թ.նոյեմբերի12

հ.Եղեգիս